

ԲԱՆԱՎԵՃ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ

ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ԳՐԱԿԱՆ ԼԵԶՎԻ ԵՎ ԱՐԱՐԱՏՅԱՆ ԲԱՐՐԱՌԻ
ՉԵՎԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՓՈԽՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մ. ԱՍԱՏՐՅԱՆ

Մենք առիթ ենք ունեցել համեմատական վերլուծության ենթարկելու արևելահայ գրական լեզվի և Արարատյան բարբառի գոյական անվան քերականական կարգերը¹։ Այժմ խոսակու ենք ածականի, թվականի, դերանվան և բայի դերբայական ձևերի մասին։

1. ԱՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ

Արարատյան բարբառում ածական անունը իր դրսևորումներով համարյա թե չի սարբերվում արևելահայ գրական հայերենի ածական անուններից։

Սաստկական կամ բազմապատկական իմաստ արտահայտելու համար ածականները կարող են կրկնվել։ Սովորաբար որպես կրկնավորներ են հանդես գալիս կարճ՝ միավանկ կամ երկվանկ ածականները, ինչպես՝ բարակ-բարակ, դեղին-դեղին, թեթև-թեթև, լեն-լեն, ծանդր-ծանդր, սև-սև, խեղճ-խեղճ, մանդր-մանդր, կառն-կառն, լավ-լավ, հեշտ-հեշտ, կարմիր-կարմիր, սիրուն-սիրուն, շուր-շուր, տախ-տախ, մենձ-մենձ և այլն։

Ածականի բաղդատական ստոիճանը կազմելու համար համեմատելի առարկան զրվում է բացառական հոլովով, իսկ ածականը մնում է անփոփոխ, ուղիղ ձևով, օրինակ՝ էս տունը էն տանիցը մենձ ա. էս ախշիգը էն ախշրգանիցը սիրուն ա։ Հատկանիշի համեմատական դրսևորումը ուժեղացնելու համար ածականի վրա զրվում է դիա բառը, օրինակ՝ էս տունը էն տանիցը դիա մենձ ա. էս ախշիգը էն ախշրգանիցը դիա սիրուն ա։

Գերադրական ստոիճան կազմելու համար ածականի վրա ավելանում է սաղից «բոլորից» կամ համենա գերադրական նախածանցը, օրինակ՝ էս ախշիգը էն ախշրգանից դիա սիրուն ա. էս տունը էն տանիցը դիա մենձ ա։ Էրե-խանց միշին համենախելոճը պուջուրն ա. Համենալավ հառսը սա յա։

Արարատյան բարբառում ևս, ինչպես արևելահայերենում է և աշխարհաբարում ընդհանրապես, ածականները ուղիղ, անփոփոխ ձևով զրվում են գոյականների վրա՝ հանդես գալով որոշի շարահյուսական պաշտոնով, գործածվում են որպես ստորոգելիական վերադիր, զրվելով բայերի վրա հանդես են գալիս ձևի պարագայի պաշտոնով, իսկ գործածվելով գոյականաբար՝ հանդես են գալիս վերջինիս հատուկ շարահյուսական պաշտոններով։ Ստորև բեր-

¹ Տե՛ս «Բանբեր Երևանի համալսարանի», 1980, № 3։

վում են ածականների կիրառության օրինակներ «Վերքից» և «Սոս և Վարդի-թերից» այս բոլոր դեպքերի համար:

«Աղասին հնազանդ որդի էր» (Վ, 10). «Ծս իմ կարն խելքով էնպես եմ իմանում...» (Վ, 19). «էսպես շար լեզու ուրիշ մարդիք էլ ունին, բայց Աղասու բարի խասիաթը, բարի սիրտն ու հոգին ֆիշը կունենան» (Վ, 15). «Քազա ձուկը խլալտալով հանում ա թոռի միջիցը» (Ս, 121). «Անուշ քունս կտրեցիր» (Ս, 158): «Հսում ա էդ կծու-կծու խոսքերը» (Ս, 168). «Հավ-լավ շորեքով զարդարվեցին» (Ս, 110). «Ոտիցը քեթն էր» (Ս, 123). «Հիմիկվա տղեքն անբան են» (Ս, 124). «Նրանք ապառաժից պինդ են» (Ս, 76). «Տաշտի պես տափակ ա» (Ս, 175). «Կասեն, թե պինդ ա» (Ս, 108). «էսօր օրը պարզ էր» (Ս, 114). «Ամեն մարդ իր համար ծանդը կենա» (Ս, 168). «Մորթենք, հուս-հուս բաժանենք» (Ս, 80). «Ուրախ-ուրախ ետ դառավ» (Ս, 103). «Նրա քվեր հետ անուշ-անուշ խոսում ա» (Ա, 76). «Մազերը բոց սպիտակ, ունքերը հաստ ու երկար, կոները երկար ու բարակ, մատները երկար ու սպիտակ. ղնկները անկտրել, համա իստակ սրբած» (Ս, 94). «Սերը սովորը կուտի» (Ս, 230). «Ա՛խ, սե ու սպիտակին մեռնիմ» (Ս, 93). «Գրի սե ու սպիտակը դուք եք հասկանում» (Ս, 134). «Մանրները հաղորդվում, մեծերը ծում էին պահում» (Ս, 109). «Մեծ ու պստիկ ժամ կերթան» (Ս, 156). «Չալ օձը տեսնողը շալ շաթուից կվախի» (Ս, 115). «Սաղ աշքով, ուրախ սրտով հասնենք էս օրին» (Ս, 111). «Քարն իր տեղը ծանր կըլնի. ծանր նստի՛ լիտր գաս» (Ս, 120):

2. ԹՎԱԿԱՆ ԱՆՈՒՆ

Արարատյան բարբառի թվականները արևելահայ գրական լեզվի թվականներից ունեն միայն առանձին հնչյունական տարբերություններ:

Արարատյան բարբառի քանակական թվականներն են.

1	մին	10	տասար	100	հարիր
2	կրկու	20	քսան	1000	հազար
3	իրեք	30	չեռեսուն	1000000	միլյոն
4	չորս	40	քառսուն		
5	հինգ	50	հիցցուն իցցուն		
6	վեց	60	վացցուն		
7	օխտր	70	օխտանասուն		
8	ութր	80	ութանասուն		
9	իննր	90	իննիսուն		

Բարդ թվականների կազմության ժամանակ բաղաձայնով սկսվող միավորները տասնավորների հետ կապակցվում են Ը հոդակապով, իսկ ձայնավորով սկսվող միավորները կապակցվում են առանց հոդակապի: Ըստ այդմ, տասնավորներից և միավորներից կազմված քանակականները ունեն հետևյալ պատկերը.

11	տասնմի	21	քսանմի
12	տասներկու	37	չեռեսնօխտր
13	տասնիրեք	44	քառսընչորս
14	տասնըչորս	59	հիցցրիննր
15	տասնհինգ	64	վացցրնչորս
16	տասնվեց	76	օխտանասնրվեց
17	տասնօխտր	82	ութանասնրկու
18	տասնութր	85	ութանասնրհինգ
19	տասնիննր	99	իննսընիննր

Յեռեսուն և Բառսուն թվականները բաղադրությունների մեջ ունենում են նաև յեռ, Բառ ձևերը, ինչպես՝ յեռմին, յեռԼԿու, յեռչոսս, ԲառԷԿու, Բառ-հինգ, Բառուրը և այլն:

Ինչպես աշխարհաբարում ընդհանրապես, այնպես էլ Արարատյան բարբառում թվականները իրենց հիմնական կիրառության ժամանակ գոյականների վրա են դրվում անփոփոխ, ուղիղ ձևով, ինչպես՝ էրկու մառթ, էրկու մառթու, էրկու մառթուց, էրկու մառթով և այլն:

Ինչպես հայտնի է, ժամանակակից հայոց լեզվում մեկից բարձր թվականների հետ գոյականը կարող է դրվել և՛ եզակի, և՛ հոգնակի: Այսպես է նաև Արարատյան բարբառում, բայց պետք է նկատի ունենալ, որ մեկից բարձր թվականների հետ վերջինումս ավելի տարածված են գոյականների եզակի ձևերի կիրառությունները:

Դասական թվականները բարբառի մեջ են մտել գրական լեզվի ազդեցությամբ և գործածվում են միայն «դասարան», «խումբ» նշանակելու համար: Դրանք են. առաչի, յերկրոոթ, յերոոթ, չորոոթ, հինգյերոոթ, վեցյերոոթ, օխայերոոթ, ությերոոթ, ինըյերոոթ, տասյերոոթ:

Գոյականաբար գործածվելիս քանակական թվականները հոդ են ստանում և հոլովվում ի հոլովման համեմատ, օրինակ՝ մինը-մին-մեհիցը, էրկուսը-երկրսի-երկրսիցը, իրեհը-իրեհի-իրեհիցը, չոսսը-չոսսի-չոսսիցը և այլն: Գոյականաբար գործածվելիս էրկու թվականը ստանում է էրկուսը ձևը՝ վերականգնելով գրաբարյան հայցականի Ս մասնիկը:

Դասական թվականները ևս գոյականաբար գործածվելիս հոլովվում են ի հոլովման համեմատ, օրինակ՝ չորոոթը-չորոոթի-չորոոթիցը, հինգյերոոթը-հինգյերոոթի-հինգյերոոթիցը և այլն: Առաչին-առաչի դասականը գոյականաբար գործածվելիս վերականգնում է բառավերջի ընկած Ն հնչյունը, օրինակ՝ առաչինը-առաչինի-առաչինիցը-առաչինովը:

Էրկու քանակականից բուն բարբառային ձևով դասական է կազմվում էֆի ձևով, օրինակ՝ էֆի օրը, որ նշանակում է երկրորդ, հաջորդ օրը:

Թաշխական թվականները կազմվում են քանակականների կրկնությամբ, օրինակ՝ մին-մին, էրկու-երկու, իրեհ-իրեհ, չոսս-չոսս, հինգ-հինգ, վեց-վեց, օխսը-օխս, ութը-ութ և այլն:

Վափական թվականները կազմվում են քանակականներից ԱՆՈՑ ածանցով, օրինակ՝ էրկուսանց, իրեհանց, չոսսանց, հրնգանց, վեցանց, օխսանց, ութանց, իննանց, տասսանց, յեռեսունանց, հիցցունանց, հարրանց:

Ստորև բերվում են քանակական թվականների կիրառության օրինակներ «Վերքից» և «Սոս և Վարդիթերից»:

«Շատ անգամ Բսան հարամի հենց թրի ոտքով էր հետ ածում» (Վ, 16). «Արխալղոնները, զորդ ա, կարկատած էր, ամա շատ որ ըլեր, մեկ տասը, Բսան տեղ, ավելի չէ» (Վ, 19). «Շատի վրա տասը տարվան թոզ ու կեղտ կար» (Վ, 20). «Որը էրկու, որը իրեհ բաղ ուներ» (Վ, 20). «Էնպես մարդ կար, որ տարենը էրկու հաբի, իրեհ հաբի լիտր տանձ, խնձոր, ծիրան ծախում էր ու մեկ էնքան էլ աղքատի ու ճամփորթի ուտացնում» (Վ, 21). «Շատը չոսս, հինգ հարսն ուներ տանը» (Վ, 21). «Էրկու ձվի տեղ չոսս, հինգ էր տալի» (Ս, 109). «Տասը հոգի են. հինգը պտի հիմար ընկնին, հինգը՝ իմաստուն» (Ս, 99). «Էրկրսի արանքը քանդեն ոչ» (Ս, 81). «Քառսուն գոմեջ կվթեին» (Ս, 218). «Օ՛հ, մին էլ քցեցին թվանքը... էրկու, իրեհ, չոսս, հինգ.

շատվոր են» (Ս, 182). «Էրկուսն էլ իրար սիրել են» (Ս, 57). «Հազար անգամ աստծուն փառք տվեց» (Ս, 60). «Տասը վերև էր գնում, քսանը ներքև գալի» (Ս, 154). «Էֆսի օրը պատի հարսին հերանց պտի տանեն» (Ս, 185). «Էֆսի օրը զանգակները քաշեցին» (Ս, 135). «Էֆսի օրն էլ Սոսը չի թողուց» (Ս, 96):

ԴԵՐԱՆՈՒՆ

Անձնական դերանուններ.— Արարատյան բարբառի անձնական դերանուններն են՝ յես, դու, նա, ճինճը, մենճ, դուճ, նրանճ, ճիրանճ: Սրանց հոլովումը առանձնապես չի տարբերվում արևելահայ գրական լեզվի համապատասխան դերանունների հոլովումից: Ստորև բերվում է Արարատյան բարբառի այս դերանունների հոլովման տախտակը, որից և երևում են դրանց հոլովման՝ գրական հայերենից ունեցած առանձին տարբերությունները:

ՆՂԱԿԻ

Ուղղ.	յես	դու (ն)	նա	հինքը
Սեռ.	իմ	քու	նրա	հիրա
Տր.	ինձ	քեզ	նրան	հիրան
Բաց.	ինձանից	քեզանից	նրանից	հիրանից
Գործ.	ինձանով	քեզանով	նրանով	հիրանով
Ներգ.	ինձանըմ	քեզանըմ	նրանըմ	հիրանըմ

ՀՈՂՆԱԿԻ

Ուղղ.	մենք	դուք	նրանք	հիրանք
Սեռ.	մեր	ձեր	նրանց	հիրանց
Տր.	մեզ	ձեզ	նրանց	հիրանց
Բաց.	մեզանից	ձեզանից	նրանցից	հիրանցից
Գործ.	մեզանով	ձեզանով	նրանցով	հիրանցով
Ներգ.	մեզանըմ	ձեզանըմ	նրանցըմ	հիրանցըմ

Անձնական դերանունները խոսքի, նախադասության մեջ կիրառվում են գոյականին հատուկ շարահյուսական պաշտոններով, այն է՝ որպես կանոն ենթակայի և խնդրի պաշտոններով:

Ստորև բերվում են անձնական դերանունների կիրառության մի քանի օրինակներ «Վերքից» և «Սոս և Վարդիթերից»:

«Ի՞նչ էլավ քեզ, մի քիչ որ համբերես, լեզուդ քեզ անես, լավ չըլի՞լ» (Վ, 10). «Մենճ ջան չունի՞նք, մեզ Աստված չի՞ ստեղծել» (Վ, 10). «էս ա, որ Աստված մեր գլխին բարկացել, ամեն կողմից զուլումը մեզանից պակաս չի բլում» (Վ, 10). «Լավ ա, որ տերը էսպես անօրին բանին համբերում ա, ես ըլիմ, շեմ համբերիլ» (Վ, 10). «Նա նրանց միտքը իսկույն իմանում ու գլուխը մահու էր տալիս, որ նրանց կամքը կատարի: Գեղցիքը բոլոր նրա արևովն էին խնդում, նրա գլխովն օրթում ուտում: Ամենի աչքը նրա վրա էր, նրան էր գովում, նրան էր օրհնում» (Վ, 15). «Փլավը ես ուտեմ, քո գլխին դմփեմ, մածունը ես լպստեմ, քեզ գող կատու կանչեմ» (Վ, 24). «Բանն ո՞վ անի՝ ես ու դուն, հացն ո՞վ ուտի՝ ես ու դուն» (Ս, 74). «Ինձանում մեղք չկա» (Ս, 72). «Ի՛նչ քո խոսքդ ասա» (Ս, 74). «Ինճն էլ մի վախտ սերի մատաղ էր էլիլ» (Ս, 96). «Ինճը հո վարդ ա, նրան էլ բլուլ բլուլ ա շինել» (Ս, 57). «Մեր պապերը ինչ որ արել են, մենճ էլ պիտի անենք» (Ս, 56). «Ախպե՛ր, քո ջանը էրփաթ ա՞ր, թե պողպատ: Դու քունը պրծար» (Ս, 55):

Ցուցական դերանուններ.— Արարատյան բարբառի գոյական ցուցական

դերանուններն են՝ սա, դա, նա, սրանք, դրանք, նրանք, էս, էդ էն, էստոնք, էդոնք, էնդոնք: Սրանց հոլովման պատկերը հետևյալն է:

	Եզակի			Հոգնակի		
Ուղղ.	սա	դա	նա	սրանք	դրանք	նրանք
Սեռ.	սրա	դրա	նրա	սրանց	դրանց	նրանց
Տր.	սրան	դրան	նրան	սրանց	դրանց	նրանց
Բաց.	սրանից	դրանից	նրանից	սրանցից	դրանցից	նրանցից
Գործ.	սրանով	դրանով	նրանով	սրանցով	դրանցով	նրանցով
Ներգ.	սրանքմ	դրանքմ	նրանքմ	սրանցքմ	դրանցքմ	նրանցքմ

	Եզակի			Հոգնակի		
Ուղղ.	էս	էդ	էն	էստոնք	էդոնք	էնդոնք
Սեռ.	էստուր	էդուր	էնդուր	էստոնց	էդոնց	էնդոնց
Տր.	էստուր	էդուր	էնդուր	էստոնց	էդոնց	էնդոնց
Բաց.	էստուց	էդուց	էնդուց	էստոնցից	էդոնցից	էնդոնցից
Գործ.	էստով	էդով	էնդով	էստոնցով	էդոնցով	էնդոնցով
Ներգ.	էստքմ	էդքմ	էնդքմ	էստոնցքմ	էդոնցքմ	էնդոնցքմ

էստոնք, էդոնք, էնդոնք դերանունները Արարատյան բարբառի խոսվածքներում ունեն նաև ըստոնք, ըդոնք, ընդոնք և դրանց համապատասխան ըստոնց, ըդոնց, ընդոնց, ըստոնցից, ըդոնցից, ընդոնցից և այլ ձևերը, իսկ էստուր, էստուց և այլ դերանունները՝ ըստուր, ըստուց և այլ ձևերը:

Ինչպես կարելի է նկատել, փաստորեն Արարատյան բարբառի միայն էս, էդ, էն և էստոնք, էդոնք, էնդոնք ցուցականներն են, որոնք իրենց ձևով և հոլովմամբ տարբերվում են արեևելահայ գրական լեզվի համապատասխան դերանուններից:

Այս ցուցական դերանունների կիրառության համար պետք է նկատի ունենալ հետևյալները:

ա) Սա, դա, նա ցուցականները բացառապես ունեն գոյականական կիրառություն՝ նախադասության մեջ հանդես գալով ենթակայի և խնդրի պաշտոններով:

բ) էս, էդ, էն ցուցականները ունեն գոյականական ու ածականական կիրառություն միաժամանակ՝ խոսքի մեջ հանդես գալով ոչ միայն ենթակայի ու խնդրի, այլև որոշիչ շարահյուսական պաշտոնով:

գ) Սա, դա, նա ցուցականները առավելապես կիրառվում են անձեր մատնացույց անելու համար, իսկ էս, էդ, էն ցուցականները՝ իրեր մատնացույց անելու համար, այնպես որ առաջինները կարելի է կոչել անձնական-ցուցականներ, իսկ երկրորդները՝ իրային-ցուցականներ:

դ) էս, էդ, էն դերանունների հոգնակի ձևերը՝ էստոնք, էդոնք, էնդոնք, խոսքի մեջ բացառապես հանդես են գալիս գոյականին հատուկ շարահյուսական պաշտոններով:

Ստորև բերվում են գոյական ցուցական դերանունների կիրառության օրինակներ:

Սա էլ հո էնպես կապ էր ընկել, պպին կանգնել» (Վ, 18). «Դա՞ էր մնացել, որ իմ գլխին օյին գա՞: Դրան էն օրը քցեմ, որ մեծ թիքեն ականջը մնա» (Վ, 31). «Իմ ծառիցը ու դաշտիցը շատ բան եմ սովորում, քան սրանցից» (Վ, 14). «Հմիկ որ գնում են, թող գնան դրանք: Սրանց ոտը պետք է կոտրվեր» (Վ, 29). «Տեսա դա դիպավ գետնովը» (Ս, 88). «Քանի նրա անումը միտս գա, քանի նրան տեսնիմ» (Ս, 91). «Կա՞ սա ա, չի կա՞ սա ա» (Ս, 95).

«Սրան հարցնեմ իմանամ» (Ս, 100). «Սրանք ոնց որ ջան են տալի մեր բանին, դուք էլ պտի ջան տաք սրանց բանին» (Ս, 124). «Աչքը մոլորված՝ էս թփից էն թուփը, էս սարից էն սարն ա ընկնում» (Վ, 12). «Էն վախտին վրա հասան, որ տերտերը դեռ չէր էկել» (Վ, 8). «Էս ճամփեն բռնեց ու գնաց» (Ս, 59). «Համա էդ անիրավ հերս ու մերս կամք չունին տալու» (Ս, 58). «Բալբի թե հենց էստուր համար էր նա էնքան տրտնջում» (Վ, 15). «Էստուր, էնդուր գլխին բամբաշելով...» (Վ, 29). «Էդով քարվան շի կտրվիլ» (Վ, 14). «Հալբաթ ըստուց երևում ա» (Ս, 95). «Ծս ինչ մեղավոր եմ ըստում» (Ս, 95). «Վնդուր համար, որ ձեր աղջկան պտի տեսնի» (Ս, 57). «Վայելիբ էստոնք, հողածի՛ն մարդ» (Վ, 12). «Վայ նրան, որ էստոնց կշտովն անց կենա» (Վ, 18). «Քաղի ըտոնք» (Ս, 95). «Ըտոնք պապական սովորույթք ա» (Ս, 100). «Ծս չեմ ուզում ընդունք» (Ս, 111). «Թող ըտոնց լիզվի տակը շընկնին» (Ս, 75). «Ըստոնց ձեները տերտերների ձենին կոխեց» (Ս, 76):

Ածականներին հարաբերակից ցուցական դերանուններն են՝ էսպես, էդպես, էնպես||րսենց, ըտենց, ընենց «այսպիսի, այդպիսի, այնպիսի»: Բայց դրանք ծագմամբ լինելով մակբայ դերանուններ՝ բարբառում պահպանում են այդ իմաստը՝ միաժամանակ նշանակելով «այսպես, այդպես, այնպես»: Ըստ այդ իմաստի՝ նշված դերանունները բարբառում ավելի հաճախ կիրառվում են մակբայաբար՝ հանդես գալով ձևի պարագայի շարահյուսական պաշտոնով: Ստորև բերվում են ածական դերանունների կիրառության օրինակներ:

«Էավ ա, որ Աստված էսպես անօրեն բանին համբերում ա» (Վ, 10). «Էնպես բան արա, որ սիրտս մի քիչ հովանա» (Վ, 13). «Ախր ի՞նչպես են Աստուծո սուրբ տաճարումը էնպես բաներից խաբար առնում» (Վ, 13). «Ի՞նչ ա էսպես օրն էլ ժամի տուտր բռնել» (Վ, 9). «Էսպես մեկ խիստ ձմեռվան օրի լիսն ու մուրը որ բաժանվեցավ» (Վ, 7). «Ըսենց օրը տրեխ ա հաղնում» (Ս, 103). «Ըսենց օրն էլա թող հանգիստ վեր ընկնիմ» (Ս, 119). «Ըսենց ուրախություն» (Ս, 56). «Ըսենց սովորություն» (Ս, 56):

Թվականներին հարաբերակից ցուցական դերանուններն են՝ էսֆան, էդֆան, էնֆան «այսքան, այդքան, այնքան»: Ինչպես ժամանակակից հայերենում է, դրանք գործածվում են և գոյականների, և բայերի ու ածականների հետ՝ հանդես գալով որոշիչ ու շափ ու քանակի պարագայի շարահյուսական պաշտոններով, օրինակ՝ «էնֆան ծուխ էր կուլ տվել, որ սիրտն էկել էր բողաղին դեմ առել, էնֆան աչքերը տրորել էր, որ աչքի լիսը թոնել էր» (Վ, 9). «էնֆան հարստությունի ու դովլաթի տեր ա» (Ս, 108). «էնֆան խաղ չունի ասած» (Ս, 58). «էսֆան չէի հասրաթ բլի ու տանջվիլ» (Վ, 12). «Որի քեֆը հարցրեց, որի հետ էլ էնֆան գրից արեց» (Վ, 8). «էնֆան պարզ էր նրա սիրտը, էնֆան հանգիստ նրա խղճմտանքը, էնֆան արդար նրա հոգին» (Վ, 17). «Հալ աղջիկն էնֆան համարձակի, որ իրա միշին աղջիկ ջոկի սիրի» (Ս, 57):

Մակբայներին հարաբերակից ցուցական դերանուններն են.

ա) Անի՝ էսպես, էդպես, էնպես||րսենց, ըտենց, ընենց, օրինակ՝

«Աղասին էսպես էր մտածում» (Վ, 12). «Էսպես էկել ենք, էսպես կերթանք» (Վ, 26). «Քո խեղճ, պառավ մորն է՞դպես ես սիրում, է՞դպես ես իմ սիրտը շահում» (Վ, 39). «էնպես էր ջրի, աղբրի բերնին հուփ տվել» (Վ, 7). «Ընչի ես ըտենց խոսում» (Ս, 57). «Ծս քեզ ըտենց չէի գիտում» (Ս, 87). «Վնենց էին խոսում» (Ս, 76). «Ըսենց տեսել են, ըսենց էլ կերթան» (Ս, 100):

Որպես ցուցական դերանուն է հանդես գալիս նաև հենց ձևը, որը կիրառվում է արդի հայերենի այնպիսի և այնպես դերանունների իմաստով,

օրինակ՝ «Քեզ համար հենց բան եմ բերել» (Ս, 73). «Հենց մարդ պտի դառնա» (Ս, 100). «Հենց տուր, որ մին դու իմանաս, մին էլ Աստված» (Ս, 80). «Հենց արա, մեզ չի ամաչացնես» (Ս, 64):

բ) Տեղի՝ էստեղ, էդտեղ, էնտեղ||ըստեղ, ըտեղ, ընդեղ, օրինակ՝ «Մեզ հո պանենու չե՞ք բերել էստեղ» (Վ, 34). «էստեղ-էնտեղ վեր էր ընկել» (Վ, 7). «Սաոցի տակին քլքլում էր ու էլ եղ էստեղ-էնտեղ ձենը կտրում» (Վ, 7). «հնամիք ըստեղ չէին» (Ս, 64). «Ընչի համար ես ըստեղ կաննել» (Ս, 56). «Հացը կերել էին թե չէ, էկել էին ընտեղ» (Ս, 112):

Փոխադարձ դերանուններ.— Արարատյան բարբառի փոխադարձ դերանուններն են մեկմեկու, հիրար, որը Աբովյանը և Պոռշյանը գործածում են իրար ձևով, օրինակ՝ «Ձեռքները իրար չի հասան» (Վ, 29). «Իրար հետ հալվորիք, իրար հետ պառավիք» (Ս, 65). «էրկուսն էլ իրար սիրել են» (Ս, 57). «Իրարից բաժանվեցին» (Ս, 100):

Կա նաև իրարոցով ձևը, ինչպես՝ «Թեկուզ աշխարհքս իրարոցով դիպչի» (Ս, 75):

Որոշյալ դերանուններ.— Արարատյան բարբառի որոշյալ դերանուններն են՝ ամեն, ամենը, ամենք, ամեն մեկ, ամեն մեկը, բոլոր, բոլորը, սաղ, ֆոմմա: Սրանցից ամեն, ամեն մեկ, բոլոր, սաղ դերանուններն ունեն հատկանշային, իսկ ամենը, ամենք, ամեն մեկը, բոլորը, ֆոմմա դերանունները՝ առարկայական նշանակություն և հոլովվում են Ի հոլովման համեմատ: Ստորև բերվում են որոշյալ դերանունների գործածության օրինակներ:

«Ամեն մարդ սկսեց գնալ իր բանը» (Վ, 8). «Ամեն մեկ խոսքը մեկ ջազահիր աժի» (Վ, 26). «Սաղ գեղը էնքան էր նրա սիրովը վառվել» (Վ, 17). «Սաղ տարին հինգ անգամ ժամի երես տեսնի» (Վ, 15): «Միրտս սուփրա չի՛ ամեն տեղ բանամ» (Ս, 63). «Ամեն երկրներում ամեն կիրակի մեծ ու պըստիկ ժամ կերթան» (Ս, 56). «Ամեն մարդի շվանով ի՞նչ ես հորը մտնում» (Ս, 93), «Ժողովուրդը սաղ ջուր կտրեցին» (Ս, 104). «Սաղ ըխտավորի ուշ ու միտքը իրա վրա ա դարձրել» (Ս, 164). «Ամենն էլ իրանց ձին են քշում» (Վ, 10). «Ամենս էլ լավ գիտենք, թե ում մեղքն ա» (Վ, 11). «Ամեն մեկը հազար թումանի տեր են» (Վ, 36). «Ամեն մեկի կնիկն ու աղջիկը հենց իմանաս խանզաղա ու բեկզաղա ըլեր» (Վ, 21). «Ա՛խ, բոլորը կանեմ, կյանքս ուզեն, չեմ խնայիլ» (Վ, 12). «Ամենքն էլ ցրվեցին» (Ս, 88). «Ամենքը մի քանի ծունդը դրին» (Ս, 73). «Քոմմա էլ տեղներիցը վեր կացան» (Ս, 116). «Քոմմա էլ հայիլ մայիլ էլան» (Ս, 189):

Անորոշ դերանուններ.— Արարատյան բարբառի անորոշ դերանուններն են. մինը, ուրիշ, էսինչ, էնինչ, մի ֆանի, մի ֆանիսը, մեկել, օֆմին: Օրինակներ. «Թե որ մինն ինձ տեսնի, ի՞նչ կասի» (Ս, 99). «Թե մինն հիքի ես զըրկում, մինն ա խոսում, թե ես տանը մնացի. թե մեկելին տանն ես թողնում, մինն ա նոթերը կիտում» (Ս, 172). «Մինը մեկելիցը օրինակ ա վեկալում» (Ս, 173). «Հարսների մեին ասեց օջախ անի, մեին էլ ասեց, որ աթար թխի, մեկելին էլ մի ուրիշ բանի դրուց» (Ս, 174). «Ծտո մեկելներին տվեց» (Վ, 34). «Ժամհարն ու մի ֆանի էլ ուրիշ մոտիկ բարեկամներ էկան տունը» (Ս, 160). «Վայելիր Աստուծո բարությունը, ուրշին էլ փայ տուր» (Վ, 12). «Մի ֆանի խաչ հանեց» (Ս, 100). «Շատ անգամ եկեղեցումը որ մեկ զարիք օֆմին կտեսնեին...» (Վ, 21):

Հարցական-հարաբերական դերանուններ.— Արարատյան բարբառի հարցական-հարաբերական դերանուններն են. ով, ինչ, որ, ինչքան, ֆանի,

ինչպես, ոնց, որտեղ, ուր, յեփ (և՛ Արովյանը, և՛ Պոռոյանը վերջինս գործածում են երբ ձևով):

Ով, ինչ, որ դերանունները հոլովվում են հետևյալ կերպ.

Ուղղ.	ով	ինչ(ը)	վոր(ը)
Սեռ. տր.	ում(ը)	ընչի(ն)	վորի(ն)
Բաց.	ումնից	ընչից(ր)	վորից(ը)
Գործ.	ումնով	ընչով(ը)	վորով(ը)
Ներգ.	—	ընչմ(ը)	վորմ(ը)

Ով և վոր դերանունները հոգնակի հոլովական ձևեր չունեն: Ինչ դերանվան հոգնակի հոլովական ձևերն են. ընչեր(ը)—ընչերի(ն)—ընչերից(ը)—ընչերով(ը)—ընչերմ(ը):

Յեփ բառն ունի սեռ. տր. յեփվան և բացառական՝ յեփվանից, հոլովականներ:

Ստորև բերվում են հարցական-հարաբերական դերանունների կիրառության օրինակներ «Վերքից» և «Սոս և Վարդիթերից»:

«Բանն ո՞վ անի— ես ու դուն. հացն ո՞վ ուտի— ես ու դուն» (Ս, 74). «Բերնին դուրբան, ով էս խոսքն ասել աս» (Վ, 14). «էլ ու՞մ դուռը գնաս, ո՞ւմ ձեռք դեմ անես» (Վ, 23). «Ումը լավ դուս էկավ՝ լավ. ումն էլ վատ դուս էկավ՝ Աստված տա, որ լավանա» (152). «Ի՞նչ քար քցեմ գլխիս» (Ս, 61). «Ի՞նչ անենք, մեր պապերը ինչ որ արել են, մենք էլ պտի անենք» (Ս, 56). «Ես բու խելքամաղ ըլիլն իմացա, թե ընչիցն էր» (Ս, 89). «Բերնիցն ընչեր ա վեր թափում» (Ս, 103). «Ախ, ընչի՞ չես քո սուրբ էրեսը մեկ օր մեզ ցույց տալիս» (Վ, 12). «Որը ոտն էր ճմռում, որը շուրն էր տաքացնում, որը բերում, որը թևն էր քաշում, որը շորերը դասում, որը տեղը քցում, քնացնում» (Վ, 22). «Որը պատը խրեց, որը քթլամանի գլուխը, որը սինը, որն էլ օճոռքը» (Ս, 78). «Ինչքան էլ զոռ արին, նա չի ականջ արեց» (Ս, 82). «Ինչքան ջուր վեր ունիս, նա ո՞չ կհատնի, ո՞չ կպակասի» (Ս, 99). «Ախր ի՞նչպես են Աստուծո սուրբ տաճարումը էնպես բաներից խաբար առնում» (Վ, 13). «Ի՞նչպես տամ իրան» (Ս, 61). «Քանիսը գլխները վեր են դրել իրանց ազգի համար» (Ս, 94). «Ո՞րտեղ ա քնած» (68). «Ո՞րտեղից էիր գալի» (Ս, 87). «Մի ձեռն տուր տեսնենք ու՞ր ա էթում» (Ս, 58). «Բաս երկինքը ու՞ր թողամ» (Վ, 12). «Ե՞րբ կարեին նրանք բաց աչքով նրա էրեսին մտիկ տալ» (Վ, 22). «Նայում էր, որ տեսնի, թե երբ ժամը դուս կգա» (Վ, 18). «Երբ պտի նա դուս գա, որ տամ իրան» (Ս, 61):

Ժխտական դերանուններ.— Արարայան բարբառի ժխտական դերանուններն են. վոչ ով (ոչ ով), վոչ մեկը, վոչ մինը, մինն էլա (ոչ մեկը), ոչինչ, որը բացի իր սովորական իմաստից ունի նաև ոչ մի դերանվան իմաստը: Օրինակներ.

«Համա ոչ ով հիմ բանը չի անիլ» (Ս, 79). «Ոչ ով բան չի իմանալ» (Ս, 113). «Նա հո ոչովի հետ իրավունք չունի խոսալու» (Ս, 67). «Անաստված կեսուրը ոչ մեկի դնչին էլ չէր նայում» (Վ, 18). «Մեկն էլա քեզ տուն չի կանչիլ» (Վ, 3). «Մինն էլա էկավ ոչ» (Ս, 67). «Մինս էլա հոգին միտքը չի բերում» (Ս, 113). «Ոչինչ, մեկ էրկու խաշ էր հանում էրեսին» (Վ, 10). «Սրտիցը ոչինչ խաբար չառնելով՝ ի՞նչ կրնանի մարդի ձեռքը, ոչինչ» (Վ, 13). «Ոչինչ բան աչքը չի գալի» (Ս, 65). «Ոչինչ բանի հոգս չեն քաշում» (Ս, 114). «Պտուղ որ չըլի, ոչինչ բան նրան չի փրկիլ» (Վ, 121):

Ամփոփելով կարող ենք ասել, որ արևելահայ գրական լեզուն իր դերա-

գոռալ, դողալ, յեռալ, խաղալ, կառթալ, հավատալ, մնալ, շողալ և այլն: Արարատյան բարբառում, ինչպես ժամանակակից հայերենում է, մեծ թիվ են կազմում Ակ վերջավորվող բնաձայնություն արտահայտող բայերը, օրինակ՝ գոգոալ, դոդոալ, սվսվալ, նոռալ, նոնոալ, բշբշալ, նդնդալ, խշշալ, խշխշալ, խոխոալ, թխկթխկալ, լխկլխկալ, կոկոալ, ծլվլալ, ծվծվալ և այլն:

Նիկ կազմության բայերը փոքր թիվ են կազմում և համապատասխանում են գրաբարի Անիկ||Աննիկ, արդի հայերենի ննիկ վերջավորվող բայերին, ինչպես՝ հաֆնիլ, ընգնիլ, ֆթնիլ, հասնիլ, հատնիլ, մեռնիլ, պոժնիլ, մտնիլ: Գրաբարյան առնուկ բայը դարձել է առնիլ, իսկ առնել բայը՝ առնիլ:

Զիկ կազմության բայերը փոքր թիվ են կազմում և համապատասխանում են գրաբարի Զիկ, արդի հայերենի Զնիկ վերջավորվող բայերին, ինչպես՝ բոշիլ, հանգշիլ, ուռշիլ, փախշիլ, կոռշիլ: Սրանցից մի երկուսը գործածվում են նաև նիկ ձևով՝ բոնիլ, հաֆնիլ, փախնիլ:

ԱնԱկ կազմության բայերը մեծ թիվ են կազմում և համապատասխանում են գրաբարի և արդի հայերենի ԱնԱկ վերջավորվող բայերին, օրինակ՝ գողանալ, դիմանալ, թեթևանալ, թիանալ, իմանալ, լվանալ, խոստանալ, խորթանալ, ծեբանալ, կշտանալ, ծանոթանալ և այլն:

ՆԱկ ձևով կա երկու բայ՝ դառնալ, տենալ, իսկ ԵՆԱկ ձևով՝ երեք բայ՝ գլիդենալ, մոտենալ, (անց) կլենալ:

Արբենալ և վախենալ բայերը դարձել են հառփիլ, վախիլ:

Լծորդության փոփոխության են ենթարկվել նաև մի քանի այլ բայեր՝ երեկի—էրեկվալ, թողուլ—թողալ, լալ—լաց ըլիլ, լնուլ—լցնիլ, խօսիլ—խոսալ: Պետք է նկատի ունենալ նաև այն, որ որոշ համադրական կազմություններ վերածվել են հարադրությունների, օրինակ՝ կախել—կախ առիլ, անցնել—անց կլենալ, բանալ—բաց առիլ, թիկնել—թիկնլը տալ, լալ—լաց ըլիլ, վերցնել—վեր ունիլ, իջնել—վեր գալ և այլն:

Անորոշի մասնիկներից բարբառում կենդանի ու գործուն են միայն Իկ, ԱնԱկ և Ակ ձևերը: Մյուս մասնիկները՝ նիկ, Զիկ, նԱկ, ԵՆԱկ, քարացած են, գործածվում են միայն մի քանի բայերի մեջ, և դրանցով նոր բայեր չեն կազմվում:

Արարատյան բարբառում, ինչպես արևելահայ գրական լեզվում է, անորոշ դերբայն ունի անվանական և բայական կիրառություն:

Անվանական կիրառությամբ անորոշ դերբայը որոշիչ հոդ է ստանում և հոլովվում ՈՒ հոլովմամբ՝ նախադասության մեջ հանդես գալով հնթակալի, խնդրի և այլ պաշտոններով: Այս կիրառությամբ Արարատյան բարբառի անորոշ դերբայը չի տարբերվում գրական լեզվի անորոշից: Ահա համապատասխան օրինակներ:

«Լալ է մեկ օր առաջ իր բանը կարգին բռնիլ» (Վ, 11). «Ուտիլ չի կարելի, հաֆնիլ չի կարելի» (Վ, 22). «Իր տնկած ծառի տակին ֆնիլը, իր բհամ բերած պտուղն ուտիլը աշխարհք արժի» (Վ, 22). «Նրա սիրտը շահիլը թանկ արժի ինձ համար» (Մ, 58). «Ինձ մնացել ա գլուխս առնիլ կորչիլ» (Մ, 153). «Մտնիլն ու քսան ձու տանիլը մին էլավ» (Մ, 112). «Ժամն սկսեց կանգնիլ» (Վ, 8). «Սկսեցին նրա խաղն ասիլ, նրա գովքն ածիլ» (Վ, 37). «Դու ուզում ես ինձ շոխրը ֆցիլ» (Մ, 94). «Շատ կռանալուցը, մումը մոտ բռնելուցը յա գիրքն էր էրվում, յա նրա միրուքը» (Վ, 11). «Հիմիկ խոսալու վախտը չի» (Վ, 11). «Իր միջումը դունդունալով, ով գիտի, թե ինչ» (Մ, 55). «Տղերը կարգով շորս կողմը շարվեցին հաց ուտելու» (Մ, 64):

Ի տարբերություն ժամանակակից հայերենի՝ անորոշ դերբայը բայական կիրառությունը մասնակցում է եղանակային ձևերի կազմությանը՝ բաղադրելով հարկադրական եղանակի ապառնի ու անցյալի ապառնի՝ ուտիլ պտեմ— ուտիլ պտեի, պայմանական կամ ենթադրական եղանակի ժխտական ապառնի ու անցյալի ապառնի՝ ուտիլ չեմ— ուտիլ չէի, ժամանակները և արգելական հրամայական եղանակի եզակին ու հոգնակին՝ ուտիլ մի— ուտիլ մեմ: Ստորև բերվում են անորոշի կիրառության այսպիսի օրինակներ:

«Քեզ տուն շի կանչիլ, մեկ սառը ջուր խմացնիլ» (Վ, 23). «Ձե՛ն ուտիլ» (Վ, 28). «Ձէր խնայիլ» (Վ, 31). «Ձեմ իմանալ» (Վ, 42). «Մի անիլ, մի ըլնիլ» (Ս, 117). «Արինն արնով չեն լվանալ» (Ս, 117). «Քու թշնամիքդ մի ուրախացնիլ, բարեկամներդ տխրացնիլ» (Ս, 117). «էքուց գնալ պտեն զանքաշատես» (Ս, 112). «Ճակատի գրվածը ջնջվիլ չի» (Ս, 84). «Որ թքես, գետինը չի ընկնիլ» (Ս, 68). «Սոված փորին ըստեղ մանգալը սագիլ չի» (Ս, 121). «Ասեմ՝ չի ըլնիլ, շասեմ՝ չի ըլնիլ» (Ս, 61). «Ըտենց խոսքերն ինձ տափացնիլ չեն» (Ս, 91):

Անկատար դերբայներ.— Արարատյան բարբառում, ինչպես արևելահայերենում է, կան երկու անկատար դերբայներ՝ անկատար 1-ին և անկատար 2-րդ: Անկատար 1-ինը կազմվում է ԸՄ (<ՈՒՄ) մասնիկով, որը դրվում է անորոշի ԻԼ և ԱԼ ածանցների տեղում, ինչպես՝ գրիլ—գրբմ, խափիլ—խափբմ, թռչիլ—թռչբմ, հավատալ—հավատբմ, գոռալ—գոռբմ և այլն: Գալ և տալ բայերը անկատար դերբայի այս ձևը չունեն: Դրանք անկատար դերբայ են կազմում միայն ԻՍ մասնիկով, որը դրվում է անորոշի ձևի վրա՝ գալիս, տալիս:

Անկատար դերբայի ԸՄ ձևն ունի միայն բայական գործածություն, միշտ հանդես է գալիս օժանդակ բայի ներկայի և անցյալի ձևերի հետ՝ բաղադրելով սահմանական եղանակի ներկա և անցյալի անկատար ժամանակները, օրինակ՝ գրբմ եմ—գրբմ ի, գնբմ եմ—գնբմ ի, ասբմ եմ—ասբմ ի, հավատբմ եմ—հավատբմ ի և այլն: «Վերք Հայաստանի» և «Սոս և Վարդիթեր» վեպերում այս դերբայը գործածված է գրական ՈՒՄ ձևով: Օրինակներ:

«Սարերի սառը բուքը, ձորերի դառնաշունչ քամին էնպես էր մեյդան բաց արեղ՝ գոռում, փշում, հոսան անում, ձնի թփերը իրար գլխով տալիս, որ ճամփորթի քիթ ու պոռունկը կպցնում, նախացնում, երեսը պատռում, գլխին, երեսին հազար անգամ խփում, աչք ու բերան լցնում, շատին կամ ձորերն էր փցում, խեղդում, կամ ձնումը թաղում, շունչը կտրում, կամ ոտ ու գլուխ փետացրած՝ ճամփից խռկում, սար ու շուլ փցում, խեղդում կամ քարեքար տալիս» (Վ, 7). «Սոսը կրակված էս խաղովը՝ վարդիթեր ա կանչում, մին կաննում ա ու ախ փաշում, որ մանիշակ չի գտնում, մին էլ ետ կտանում ա, դաշալը ֆրեում» (Ս, 60):

Անկատար 2-րդը խոսվածքների մի մասում, օրինակ Ծրեանում, կազմվում է ԻՍ, իսկ խոսվածքների մյուս մասում, օրինակ Աշտարակում, կազմվում է ՈՒՍ մասնիկով, որը դրվում է անորոշի ձևի վրա, ըստ որում, անորոշի Ի լծորդը այս դեպքում փոխվում է Ե-ի ինչպես՝ գրիլ—գրեիլիս||գրելուս, վազիլ—վազելիս||վազելուս, անիլ—անելիս||անելուս, հավատալ—հավատալիս||հավատալուս և այլն:

Այս դերբայը համապատասխանում է արդի հայերենի անկատարի երկրորդ ձևին՝ ԻՍ վերջավորվող դերբային և ունի նույն կիրառությունները, այն է՝ անկախ գործածությամբ ցույց է տալիս դիմավոր բայի գործողության ժա-

մանակը, իսկ ըլիլ օժանդակ բայի հետ միասին կազմում է երկրորդական բաղադրյալ ժամանակներ: Ահա համապատասխան օրինակներ:

«Մունը դնելիս կամ շոֆելիս մեջքն ու ոտներն էին ցավում» (Վ, 10). «Ջանգուլում ասելիս կամ ֆալ ֆցելիս կամ թիզ բաց անելիս ամենն էլ իրանց մտքումը նրան էին դնում» (Վ, 27). «Հավն էլ ա օրը հարիր անգամ ջուր խմելիս կամ կուտ ուտելիս գլուխը ցածացնում, բարձրացնում» (Վ, 25). «Ա՛խ, մի պոռշը պոռշին շիպչելուս նյա ձենն առնեմ» (Ս, 85). «Կարամ էս բշեր ժամ գնալիս հասնիլ» (Ս, 61). «Գետինը բարուքանդ անելուս ըլնիմ, Ալագյազու հաշումը աղոթք անելուս ըլնիմ...» (Ս, 62):

Շրջուն շարահասության ժամանակ գալիս||գալուս, տալիս||տալուս անկատար դերբայների Ս վերջնահնչյունն ընկնում է, ինչպես՝ «Նա տարին մի հետ անջախ ա գալի» (Ս, 57). «Գիշերվան ժամ էլ շես գալի» (Ս, 55). «Զեռները փշելով՝ գվգվի էր տալի» (Ս, 59). «էն հաստ պոպոքու տակիցն ա գալի» (Ս, 59):

Վաղակատար դերբայ.— Կազմվում է ԵՎ մասնիկով, որը դրվում է ԵԼ||ԻԼ վերջավորվող բայերի անկատարի հիմքի վրա, օրինակ՝ պատմել||իլ—պատմել, սրբել||իլ—սրբել, կիտել||իլ—կիտել, ջոկել||իլ—ջոկել և այլն, իսկ ՆԵԼ||ՆԻԼ, ՉԵԼ||ՉԻԼ, ԱԼ, ԱՆԱԼ վերջավորվող բայերի կատարյալի հիմքի վրա, օրինակ՝ հաֆնել||իլ—հաֆել, հասնել||իլ—հասել, թոչել||իլ—թոչել, հանգչել||իլ—հանգել, աղալ—աղացել, գոռալ—գոռացել, դիմանալ—դիմացել, իմանալ—իմացել, թիլանալ—թիլացել և այլն: Կատարյալի հիմքից է կազմվում նաև պատճառական բայերի վաղակատար դերբայը, ինչպես՝ մեծացնել||իլ—մեծացրել, կորցնել||իլ—կորցրել, հովացնել||իլ—հովացրել, հասցնել||իլ—հասցրել և այլն:

Վաղակատար դերբայը, ինչպես որ անկատարի ՉՄ ձևն է, մի տեսակ կիսանկախ բառի՝ բայահիմքի դեր է կատարում, ունի միայն ձևաբանական նըշանակուժյուն՝ օժանդակ բայի ներկայի և անցյալի ձևերի հետ բաղադրելով սահմանական եղանակի վաղակատար և անցյալի վաղակատար ժամանակները, ինչպես՝ գրել եմ—գրել ի, պոկել եմ—պոկել ի, փախել եմ—փախել ի, մնացել եմ—մնացել ի, կորցրել եմ—կորցրել ի և այլն: Օրինակներ.

«Մար ու ձոր տերտերի փոր. ղորդ են ասել» (Վ, 14). «Քիչ ա մնացել որ մեզ սաղ-սաղ ուտեն» (Վ, 14). «Կարթալ, մարթալ շեմ գիտում. էշ կերել եմ, էշ մենձացել» (Վ, 14). «էս հասակը հասել էր, քսան տարին անց կացել, նա դեռ հորնըմոր առաջին էնպես էր, ինչպես մեկ անմեղ գառը» (Ս, 15). «Քու գլխիդ ինչ թաս են կոխել, էս վախտ ըստեղ կաննել սրթսրթում ես» (Ս, 55). «Մեր պապերը ինչ որ արել են, մենք էլ պտի անենք» (Ս, 56). «էս ցուրտ վախտին արևը ինչ լավ դուս ա էկել» (Ս, 56). «Ըստեղից մի իզ ա գնացել» (Ս, 59):

Հարակատար դերբայ.— Կազմվում է ԱՄ մասնիկով, որը բայահիմքերի վրա է դրվում վաղակատարի կանոններով, այսինքն՝ ԱՄ մասնիկն ափելանում է ԵԼ||ԻԼ վերջավորվող բայերի անկատարի, իսկ ՆԵԼ||ՆԻԼ, ՉԵԼ||ՉԻԼ, ԱԼ, ԱՆԱԼ վերջավորվող բայերի կատարյալի հիմքի վրա, ինչպես՝ ա) պատմել||իլ—պատմած, սրբել||իլ—սրբած, ֆնել||իլ—ֆնած, բ) հաֆնել||իլ—հաֆած, ընկնել||իլ—ընկած, փախչել||իլ—փախած, կորչել||իլ—կորած, աղալ—աղացած, մնալ—մնացած, դիմանալ—դիմացած, թիլանալ—թիլացած և այլն:

Ինչպես արևելահայ գրական լեզվում է, Արարատյան բարբառում ևս հարակատար դերբայի և օժանդակ բայի կապակցուժյունները հատուկ են միայն

կրավորական և այն շեզոք բայերին, որոնց արտահայտած գործողութունը հատկանշվում է հետևանքային կողմով, օրինակ՝ էրված ա—էր, ջարքված ա—էր, գրված ա—էր, ծալված ա—էր, պոկված ա—էր, ֆնած ա—էր, նստած ա—էր, բարկացած ա—էր, նեղացած ա—էր և այլն:

Արևելահայ գրական լեզվին համապատասխան՝ Արարատյան բարբառում ևս ներգործաձև հարակատար դերբայների և օժանդակ բայի կապակցությունները, որպես կանոն, արտահայտում են կրավորական իմաստ, ինչպես՝ գրած ա նշանակում է գրված է, ջարքած ա՝ ջարդված է, էրած ա՝ այրված է և այլն:

Ասվածներից կարելի է եզրակացնել, որ Արարատյան բարբառում, ինչպես արևելահայ գրական լեզվում է, հարակատարի և օժանդակ բայի կապակցությունները բաղադրյալ ստորոգյալներ են և ոչ թե բայի ժամանակային ձևեր:

Հարակատար դերբայը կիրառվում է որպես որոշիչ, ստորոգելիական վերադիր, ձևի պարագա, իսկ գործածվելով փոխանվանաբար՝ հանդես է գալիս գոյականին հատուկ շարահյուսական պաշտոններով: Օրինակներ.

«Գեղումը մեծացած ուսմիկ տղա՝ հազարից մեկ անգամ ժամի երես չէր տեսել» (Վ, 10). «Սիրտս սրտում ա էդ հարցրած բաներիցդ» (Վ, 13). «Քուտված փուշը հենց կիմանամ նուշ ա» (Ս, 73). «Իմ հորն ու մոր ֆառացած սրտերը բալի դու կակղացնես» (Ս, 76). «Հացը քցեցին կանաչ խոտին բաց աբած սուփրի վրա, ամենի բերած պաշարն էլ Գարեգինը բաց արուց լավ տանտկան պես» (Ս, 193). «Օրն էկել ա յճաշ ա դառել, դեռ ֆնած են» (Ս, 171). «Էնքան կնիկ ու աղջիկ էին հավաքված» (Ս, 169). «Հենց բան ա արել, որ Աշտարակ դեռ լսված չի» (Ս, 202). «Գարեգինը ո՞րտեղ ա ֆնած, մտենմ կուշտը քնեմ» (Ս, 70). «Տան ջահել աղչկերքն էլ գլխըները սանդղեցին, մազները հուսած, քամակներին ֆցած՝ գնացին, որ տան համար ջուր բերեն» (Վ, 8). «Ասածը մեկ ականջովը մտավ, մյուսովը դուրս էլավ» (Վ, 10). «Ախպեր, աբածիս հլա մեկ ճար արա, հետո ուրիշ բաներից հարցրու» (Վ, 13). «Թող քու ասածն ըլնի, ընչանք քու ասած վախտը մի ամիս ու կես անճախ ա մընում» (Ս, 199). «Հալբաթ Երևան կըլնի գնացած, յա էջմիածին, կըլնի որ հավեն կակղած ըլնի ընտեղրանք»:

Ենթակայական դերբայ.— Կազմվում է ՈՂ մասնիկով, որը դրվում է Ե|| Ի խոնարհման բայերի անկատարի, իսկ Ա խոնարհման բայերի կատարյալի հիմքի վրա, ինչպես՝ ա) գրել||իլ—գրող, սրբել||իլ—սրբող, ֆնել||իլ—ֆնող, նախնել||իլ—հախնող, փախչել||իլ—փախչող, բ) աղալ—աղացող, դողալ—դողացող, դիմանալ—դիմացող, կշտանալ—կշտացող և այլն:

Ենթակայական դերբայը բայական ժամանակների կազմությանը չի մասնակցում և ունի միայն անվանական կիրառություն՝ նախադասության մեջ հանդես գալով որոշիչ, ստորոգելիական վերադրի, ենթակայի, խնդրի և այլ պաշտոններով, օրինակ՝ «էս էկող շաբաթ օրը մեր սուրբ Գրիգոր պապի Խորվիրապից դուս գալու օրն էր» (Ս, 162). «էն լուն ուղտ շինող խալխն ամենքը մի կողմից խեղճ էրեխին ամաչացրին» (Ս, 181). «Քոմմա էլ դառել են իր քեֆին թուխս նստող թրջված հավ» (Ս, 202). «Գարեգինը ոչ ըտենց շուտ իր գլուխը կապող ա, ոչ էլ ձեզ վրա աչք ֆցող» (Ս, 76). «Իմացողն իմացավ ու ականջի տակն էլ բալքի քորեց» (Վ, 21). «Տեսավ, թե Սոսն ա էս հաղ կանչողը» (Ս, 181). «Աստված լսող կատարող ըլնի» (Ս, 191). «Կարդացողի ոտն ու ձեռը դող էր ընկնում» (Վ, 11). «Մնացողներին էլ Աստված սաղ պահի

իրենց համար» (Ս, 165). «Զուկը կալնող էին ղրկել հառաջուց ձորը» (Ս, 169). «Վայ մեզնից ետ կեղղներին» (Ս, 173);

Ձևի դերբայ.— Կազմվում է նն ածանցով, որը դրվում է անորոշ դերբայի վրա, ըստ որում, անորոշի Ի՛կ մասնիկը այս դեպքում փոխվում է նլ-ի, օրինակ՝ վազել||իլ—վազելեն, թափել||իլ—թափելեն, թոչել||իլ—թոչելեն, դողալ—դողալեն, մղկտալ—մղկտալեն, սոսոալ—սոսոալեն և այլն:

Իմաստով նույնանալով անորոշի գործիական հոլովածին՝ ձևի դերբայն այս պատճառով Արարատյան բարբառում քիչ գործածական է: Այսպես, «Վերբում» և «Սոս և Վարդիթերում» դա գործածվում է շատ հազվադեպ, օրինակ՝ «Սոսը ջիրիտը երկինքը ծուրի փցելեն ու բոնելեն կաննել էր» (Ս, 115): Սովորաբար գործողության ձևի իմաստն արտահայտվում է անորոշի գործիական հոլովածի միջոցով, ինչպես՝ «Ասեց մերը բարկանալով» (Վ, 10). «Միբուբը ֆոբելով, կոնդալ գլուխը տոռելով, արշտոտալով դուրս ու տուն էր անում» (Վ, 8). «Իրար հետ խոսալով, ծիծաղալով մեկն իրանց տունը գնաց, մյուսն իրանց» (Վ, 9). «Թագա ձուկը խլալտալով հանում ա թոռի միջիցը» (Ս, 121). «Աչքերը նմոելով, արշտոտալով շորերը նոր էր հագնում» (Ս, 71):

Այսպիսով, ամփոփելով կարող ենք ասել, որ Արարատյան բարբառը դերբայական համակարգի տեսակետից արևելահայ գրական լեզվից տարբերվում է ապառնի և ժխտման դերբայների բացակայությամբ, միևնույն ժամանակ թեկուզ և սահմանափակ գործածություն ունեցող ձևի դերբայի առկայությամբ, այլև նրանով, որ անորոշ դերբայը, գրական լեզվի համապատասխան կիրառություններն ունենալով հանդերձ, հանդես է գալիս նաև որպես բայական եղանակային ձևերի բաղադրիչ:

М. Е. АСАТЯН — Взаимоотношения морфологических систем восточноармянского литературного языка и Араратского диалекта. — В статье в сравнительном плане рассматриваются прилагательное, числительное, местоимение и причастные и деепричастные формы Араратского диалекта и восточноармянского литературного языка.

Своими морфологическими особенностями и синтаксическими функциями прилагательное, числительное и местоимение литературного языка лишь в отдельных чертах отличаются от питающей его основы — Араратского диалекта. С точки зрения систем причастия и деепричастия восточноармянский отличается от Араратского диалекта наличием причастных форм будущего и негативного, отсутствием причастия образа действия, а также и тем, что в литературном языке, в противовес диалекту, инфинитив не выступает в качестве компонента личных глагольных форм.